

կած է իւր անունը և վերագրած է իւր աշխատութիւնը մի Մար—Աբասին, որ հնարդած անձն է՝ բայց մենք ուրիշ անունը չունենալու պատճառով կպահենիք այս անունը, որով պիտի հասկանանք այն Ասորուն, որ սփալեցրած է Խորենացուն:

Եթէ ասորի զրականութեան տեղեակ գիտունները միաձայն էշաստատեն, թէ Մար—Աբաս անունը կարող էր գործածվել միայն քրիստոնէական գարում, ուրեմն մեր ենթազրութիւնը այն մասին թէ Եղիսիայի գպրոցի Ասորու զրած չարազրութիւնը հեղինակը նախաքրիստոնէական է կարծել տուել, ամենեին անհնարաւոր չէ:

(Աշուածականին):

Ա. Տ. Պ.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԴ,

ՏՊԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅՐՈՂ,

(«Աբարատ» , Հոկտեմբեր) :

Թ.

Իւր ընկերների աջը աւելի հեռու շրջեցնելու համար իւր ժեռնարկութեան իսկական նպատակից, Գուտտէնբէրզը պարապումէր մի եւ նոյն ժամանակ երկրորդական արունեաներով, ծածուկ շարունակելով. իւր հետազօտութիւնները մեքենայի կատարելազործութեան համար: Նա սովորեցնումէր Գրիտցէնինին թանկագին քարեր տաշելու արուեստը, ինքն եւս յղկումէր վինետիկեան ապակի հայելի շինելու համար. Նա շինումէր հայելիներ եւ դնումէր պղնձի շրջանակների մէջ, որոնց գարդարումէր ինն ու նոր կտակարանից, զիցարանութենից վերցված պատկերներով: Այս հայելիները, որոնք ծախվումէին Սխէն քաղաքի տօնավաճառում, մատակար արումէին բոլոր ընկերութեան պիտոյքը, ուստի եւ միջոց էին տալիս Գուտտէնբէրզին ծածկելու իւր զիւաի համար արած ծախսերը:

Իւր պարապմունքը աւելի եւս ծածկելու համար հասարակութեան անդադար հետարքրութիւնից, որ արդէն սկսել էր կարծիք տանել նորա կախարդութեան մասին, Գուտտէնբէրզը փոխադրվեցաւ քաղաքից դուրս: Նա շինեց իւր արուեստանոցը ինն սուրբ Արքօնաստի վանքի աւերակների մէջ: Այստեղի միայնութիւնը, որտեղ դրացի էին միայն քաղաքի աղքատ բնակիչները, շատ յարմարաւոր էր իւր առաջին փորձների համար: Վանքի ընդարձակ բակերի խորերում Գուտտէնբէրզը տեղաւորեց իւր ընկել ներին, որոնց դորձը կարօտ չէր ծածուկ պահպելու, իւր համար իւր դորձերին յարմարաւոր մի խուց ընարեց: Նորա զուռը միշտ կողպված էր լինում կողպէքով եւ ոչ ոք երբէք ոտ չէր դնում նորա շէմքը: Կարծումէին թէ նա այնտեղ պարապումէր յատակապձեր շինելով եւ հայելիների համար նկարներ պատրաստելով, բայց նա անցուցան ումէր այնտեղ անքուն զիշերները չարչարվելով իւր զիւաի վերայ: Նա կարումէր ծառից շարժուն տառեր եւ մտածումէր թէ բնչպէս մետաղից

ժուլէ այն տառերը, նա պատումէր իւր դրուխը նոցա համար ծեւեր դանելու կամ փայտից կամ երկաթից, որ նոցանից կազմէ բառեր, տողեր, նախաղասութիւններ եւ երիսներ եւ տպէ այն ծեւով թղթի վերայ: Նա դրաւ գանաղան զոյնով թէ չոր եւ թէ հեղուկ թանաքներ, խողանակ կամ բարձ—թանաքը տառերին քսելու համար, տախտակներ եւ շրջանակներ—տառերը միմիանց մօտ քոնելու համար, ոլորակներ եւ ծանրութիւններ—տառերը թղթի վերայ սեղմելու համար: Ամիսներ եւ տարիներ անցանի—փորձերի վերայ յաջող եւ անյաջող, որոնք մի եւ նոյն ժամանակ վատնում, ին թէ գուտաէնրէրդի կարողութեանը եւ ընկերութեան դրամաղուխը: Վերջապէս շինելով փորբիկ մի մամաւ, որ ունէր իւր մէջ նորա հասկացողութեամբ այն մերենայի բոլոր պայմանները, ոքը նորան այն ժամանակ համապատասխան էր թըւում իւր նպատակին, նա վերջացրեց այս օթինակը եւ վերարկուի տակ բռնած զնաց բարձրը մի մերենայ է, որի նորան այն ժամանակ համապատասխան էր թըւում իւր նպատակին, նա վերջացրեց այս օթինակը եւ վերարկուի մօտ, որի անունը էր Կօնրադ Զաշպախ, եւ պատուիրեց նորան որ շինէ նոյն մերենայից մեծ դիրքով: Նա ինըրեց վարպետից այս բանը ծածուկ պահելու, միայն ասաց նորան որ այս այնպիսի մի մերենայ է, որի օքնութիւնամբ կարելի է շինել այնպիսի հիանալի մերենապիտական եւ արհեստական բաներ, որից ժամանակով հրաշալիքներ կտեսնվին: Կոկողը վերցնելով օքնակը, պտտումէր եւ շուր էր տալիս ամեն կողմեր: Եւ աշակերտի առաջին դործը զնոտի պէս փոքճառու արուեստաւորի թեթեւ ժըպիտով ասաց նորան փոքր ինչ հենցնական ծեւով: « Ինչպէս երեւումէ մեղ մի հասարակ սեղմիչ է հարկաւոր, պարոն Յովհան»: Այս պատասխանեց գուտաէնրէրդը լրջիւտ եւ ոգեւորված դէմքով: Աս յիրաւ սեղմիչ է, բայց այնպիսի սեղմիչ, որից շուտով պիտի հոսէ անսպառ ալիքներով ամենամրաշալի մի ըմպելիք, որի նմանը երբէք չէ կոտրել մարդկային ծարաւը: Ասու միջոցով Աստուած պիտի տարածէ իւր Խօս+ը, զորանից պիտի հոսէ նշմարաւութեան աղբիւրը, զա պիտի լինի մի լուսատու, որ կցրուէ տղիտութեան խաւարը եւ կուսաւորէ ժողովուրդը մինչեւ այժմ անծանօթ լոյսով: Նա զնաց: Վարպետը նորա բառերից ոչինչ չնամկանալով, շինեց մերենան եւ տարաւ Արքօնաստի վանրը:

Աս էր տպազրութեան առաջին մամուլը՝ վարպետը մերենայն Գուտատէնրէրդի ծեռն զնելիս սկսաւ հատկանակ, որ նորա մէջ ծածկված է մի դադտնիք: Ես տեսնումիւն, պարոն Յովհան, ասաց նա գուտաէնրէրդին, որ դուք յիրաւի յարաբերութիւն ունիք ողիների հետ: Այսուհետեւ ես կմնազանդիմ մեղ որպէս մի ոգուն:

Ժ.

Այն ինչ գուտաէնրէրդը ստացաւ իւր ցանկացած մամուլը, ալդէն մկանց տպազրեկ դրբերը: Այն մամուլից դուրս եկած առաջին զրբերի մասին շատ սակաւ տեղեկութիւն է մնացած, բայց գուտատէնրէրդի խորին աստուածպաշտական բնաւորութիւնը չէ թողնուել ոչինչ կասկած իւր առաջին տպազրած զրբերի ինչ տեսակ լինելու մասին, որին նա պիտի նուիրէր իւր զրծի սկիզբը: Ամենայն հաւանականութեամբ նորա նոդեւորվական զրբեր եղած են: Աստուծու խօսքով եւ Աստուծու ներշնչութեամբ հնորված արուեստը նոյն ինքն Աստուծուց մկսաւ, ինչպէս որ ցոյց են տապահութիւնները: Սաղմոսի Աստուածային երգերը եւ հրովար Մայնցի յետազայ տպազրութիւնները: Սաղմոսի Աստուածային երգերը եւ հրովար

չակաւոր լատիներէն Աստուածաշունչը Մայնցի մէջ առաջին տպաղրված երեսներ էին, ար դուքս Եկան Գուտառէնրէրդի հնարած մերենայի տակից: Աստուծու անունի փառաբանութիւնը եւ դէսպի նա ուղղված աղօթքը—ահա այն երկու ճագները որ արծակից տպաղրական մամուլը իւր բարհապաշտ եւ անբաղդ հնարողի մեռի տակից: Տպաղրական մամուլի գործունէութեան սկիզբը պիտի մնայ նորա համար փառաւոր յիշատակի: Այս հրատարակութիւնների մանրամասն տեղեկութիւնները չկան Սարապուրդի եւ Մայնցի մէջ անդամ որովհեաւ Գուտառէնրէրդի համեստութիւնից էր թէ հպարտութենից արգեօր, իւր ոչ մի տպաղրած պրի վերայ չէր դնում իւր անունը: Ամանք ասումեն, որ նա չէր տալում իւր անունը զրբերի վերայ քրիստոնէական համեստութեամբ; չկամենալով սեփականացնել մարդկային անունին այն փառքը, որ նա կամենումէր նուիրել իւր գիտի Աստուածային ներշնչողին: Միւսները կարծում են թէ նա չէր հրատարակում իւր անունը զրբերի վերայ նորա համար, որ տպաղրութիւնը, ինչպէս եւ ամենայն արուեստ, այն ժամանակ համարվումէր առևտրական գործ, ուստի եւ աղուտականի համար անվայել, այդ կատորացներ նորա ցեղին նշանակութիւնը եւ կըրկէր նորան իւր յատուկ կրօնումից: Յայտնի է միայն մի ընծայարերական գրութենից, որ գրած է Գուտառէնրէրդը իւր բրոշ Հէրէլի անունով, որ կոյս էր ս. Կարայի վանքում Մայնցի մէջ, որ նա տուած է նորան իւր ձեռով Սորապուրդի մէջ տպաղրված դրֆերը եւ խոսանումէ այնուհեած եւս ուղարկել նորան բոլոր այն զրբերը: որոնք կտպին:

Բայց յաղթանակից յետոյ Գուտառէնրէրդը պիտի ենթարկվէր շատ դառնութիւններին: Մենք տեսանք, որ փողի կարօտութիւնը ստիպեց նորան ընկերներ պըտելու իւր նպատակը իրադորելու համար: Այժմ օգնականների կարօտութիւնը բաղմանիւ աշխատութիւնների համար ընդարձակ տպարանի մէջ սափակեց նորան յայտնելու իւր ընկերներին եւ ուրիշ շատ արուեստաւորներին բոլոր գործի ընթացքը եւ տպաղրութեան քանի մի դադանիքներն անդամ: Ընկերները ժանձրանալով փող տալուց այն մեռնարկութեան համար, որ աշխատանք չէր անում, հրաժարվեցան շարունակել այսպիսի մի անօգուտ գործը: Գուտառէնրէրդը աղաչումէր, որ չձգն նորան այն իսկ բոպէին, երբ որ մօտ էին թէ փառք եւ թէ հարստութիւն: Նորա համամայնեցին նորից փող տալ նորան այն պայմանով միայն, որ նա նոցա մասնակից անէ իւր բոլոր գաղանիքներին, բոլոր իրաւունքներին, բոլոր փառքին եւ բոլոր օգուտներին:

Իւր զործի յառաջադիմութեան համար Գուտառէնրէրդը ծախեց նոցա իւր փառքը: Նորա անունը անհետացաւ, ընկերութիւնը կանեց իւր հիմնադրին եւ շուտով զիստ հնարողը իւր սեփական արուեստանոցի գործաւորներից մին զարձաւ: Միհենյն կերպով, Քրիստուափոր Աօլումբն եւս հայրենիքը շղթայակապ վերադարձաւ իւր սեփական նաւով, որի մէջ եղած նաւորդների համար նա գտել էր նոր աշխարհի ծանապարհ:

Ճ.Ա.

Այս դեռ տակաւ էր: իւր ընկերների ժառանդները դատ բացին Գուտառէնրէրդի զէմ, որ խլին նորանից թէ զիւտ դորձելու, թէ սեփականութեան եւ թէ օգուտ

քաղելու իրաւունքը Նորա կանչեցին նորան Ստրասբուրգի դատարանը աւելի պաշտօնական եւ ներգործական կերպով ստիպելու նորան հրաժարվել իւր իրաւունք-ներից: Դատարանի առաջ նա չափազանց դժուարութեան մէջ էր: Խրեան արդարացնելու համար նա իւր արուեստի տեխնիկական մանրամասնութիւնները սախաված էր յայտնել, բայց նա ամեննելին չէր կամենում յայտնել, որովհետև նորան այլ եւս յոյս չէր մնում ապադայում զործը առաւել բարութելով նորից իւր ձեռք բերելու: Հարցաւէր դատաւորները նորան խորամանկ հարցեր էին առաջարկում, որոնց պատասխանները դուրս կիանէին տպագրութեան բոլոր դադանիքները: Նա հրաժարվումէր պատասխաննելուց, լաւ համարելով մատնել իւր անծը քանի թէ իւր գաղտնիքները բացարձակապէս յայտնել ամենին: Խրեանց նպատակին համենելու համար կանչեցին գուտտէնրէրդի ամենահաւատարիմ ներից մի քանի զործաւորներ եւ ստիպումէին նոցա յայտնել ինչ որ զիտէին: Այս պարզամիտ, բայց բարիխիմ անձները գուտտէնրէրդին հաւատարիմ մնալով հրաժարվեցան որ եւ իցէ բան առելուց: Խրեանց տիրոջ սեփհականութիւնը նոցա սրտում աւելի ապահով մնաց քան թէ ազահ ընկերների սրտում: Տպագրութեան զիսաւոր գաղանիքներից ոչ մին չյայտնվեցաւ: Գուտտէնրէրդը աղքատացած, զատապարտված, գուցէ եւ արտորված, հեռացաւ իւր մայրենի Մայնց քաղաքը, որ նորից զործը ձեռք առնէ եւ վերականգնէ իւր կորցրած կեանքը ու խաւարած փառքը:

Այս գեռ եւս երիտասարդ էր. Ստրասբուրգում եղած դատը համբաւեց նորա անունը բոլոր Գերմանիայի մէջ: Բայց նա վերադառնումէր իւր հայրենիքը իրքն մի հասարակ արուեստաւոր, թէ եւ դուրս էր եկել իրքեւ ազնուական: Անարդութիւնը, աղքատութիւնը եւ փառքը մին միւսից յետոյ հասան նորան: Միայն մէրը ճանաչեց նորա ինչ եղածը եւ ինչ որ պիտի դառնար ժամանակով:

ԺԲ.

Ահա ինչ են ասում այս մասին տեղական աւանդութիւնները, որին վկայ են երկու վկայադրեր, որոնք պահպանված են դիւանատանը եւ նշանված են 1457 թուով: Նոցանից մինում զրված է որ տիկին Աննան, գուտտէնրէրդի կինը զոհարեսքութիւնը է արած Ստրասբուրգի եկեղեցուն ի յիշատակ իւր եւ իւր սերունդների հոգու: Միւսը նորա մահի վկայադիրն է:

Իւր երկրորդ աքտորման ժամանակ գուտտէնրէրդը ծանօթացաւ մի ստրասբուրգի երիտասարդ օրիորդի հետ, որը սիրեց գուտտէնրէրդին եւ որի անունը Աննա դեօ լապօրտ էր: Աննան այն աղդիցն-էր, որին պատկանումէր թէյնի ափին դտնված մի ամրոց: Գուտտէնրէրդը եւ Աննան միմնանց դրաւոր խաստում տուին ամուսնանալու: Աննան միշտ հաւատարիմ մնաց իւր խօսքին: Գուտտէնրէրդը Մայնց վերադառնալուն պէս պիտի ամուսնանար, բայց այս չարաւ: Վախենումէր նա արդեօք պատուական եւ ազնիւ Աննային աղքատութեան եւ անարգութեան մէջ ծգելու, որի մէջ ընկած էր ինքը, թէ իւրեան անարժան էր համարում ամուսնանալու այնպիսի մի դասակարգից ծագած օրիորդի հետ, որից ինքն զրկվել էր արուեստաւոր դառնալով: Գուտտէնրէրդը չպահանջեց իւր հարսից տուած խօսքի կատարումը եւ ինքն եւս չկատարեց իւր խօսքը: Նա սպասումէր իւր անունի

փառքին եւ լաւ օրերին եւ այն ժամանակ միայն կամնումէր առաջարկել Աննացին մասնակից լինելու իւր վիճակին։ Նորա համեստումիւնը եւ ազնուաբարոյւթիւնը ընդդիմաղրումէին անդադար հարսի խնդիրներին, միայն ստիպվեցաւ զիշանել Սարասրուրդի դատարանի առաջ, ուր Աննան դիմեց խնդրով, որ ստիպէին գուտտէնբէրդին կատարել իւր հետ ամուսնանալու խոստումը։ Նոցա դատարան կանչվելը եւ ամուսնութեան միակ հաւասարի վկայագիրը պահված է մինչեւ այժմ։ Վերջապէս զիշաւ Գուտտէնբէրդը Աննայի Թախանձանքին եւ ամուսնացաւ նորա հետ։ Նորա ունեցան որդիներ, որոնք մեռան ծաղիկ հասակում։

Մեծ մարդիկների ժառանգութիւնը նոցա զիւտերն են, իսկ նոցա ժառանգները մարդկային ալրն է։

Երբ 4459ին զատարանը վճռեց, որ Գուտտէնբէրդը վարժատրէր Անդրէաս Դրիտցէնէնի ժառանգներին, եւ ինքը մնաց իւր դադունիքների միակ տէր, նա ծեց Արքօնաստի վանքը եւ տեղափոխվեցաւ Ստրասրուրդ եւ բնակեց Գագանաց կոչված տանը, ուր եւ շինեց իւր առաջին տպարանը։

Նկատեր արժանի է, որ այն տեղում, ուր կանզնած էր այն տունը, այժմ Անցէօն է (Լսարան) կարծես թէ այդ տեղը վաղուց նախասահմանված էր լուսաւորութեան մեծ զորդի համար, որի սկիզբը տպագրութիւնը զրաւ այնտեղ եւ որը սկսեց տարածվել յետոյ այն տեղից դասատուութեան միջնորդութեամբ։

Երբ Գուտտէնբէրդը ստիպվեցաւ 4446ին Ստրասրուրդից զնալ, նա այնտեղ թողեց իւր արուեստի աւանդութիւնը իւր աշխատակիցների եւ զործաւորների մեռին, որոնք զիտէին նորա զիւտի գաղտնիքը։ Այնուհետեւ շուտով 4447 թ. մի պարոն Մէտէլին եւ մի պարոն Կէշտէյն, թէեւ բոլորովին անհմուտ լինելով այս արուեստին, որ այն ժամանակը շատ սակաւ էր յայտնի, Կարաէզինեան վանքի գանձարանի օգնութեամբ հիմնեցին տպարան եւ շատ շուտ սկսան տպել եւ ի լոյս ընծայել Աստուածաշունչը գերմանական լեզով։ Այնուհետեւ միմեանց ետեւից շատ ուրիշ զրբեր հրատարակվեցան Մէտէլինի տպարանից, որ շուտով հարստացաւ, այն ինչ անբաղդ Գուտտէնբէրդը աղքատութենից հալածված իրբու մի փախստական վերադառնումէր Մայնց։

Այն նախանձաւորաւթիւնը, որ կար Մայնց եւ Ստրասրուրդ անկախ քաղաքների մէջ եւ այն հարստութիւնը, որով մեծացաւ Մէտէլինի ազդեցութիւնը, նպաստում էին Մէտէլինի ինքնամիրութեանը եւ օգնեցին նորան Գուտտէնբէրդի անունը իւրեան սեփականացնել։ Այս բանս յաջողեցաւ նորան այն աստիճան, որ բանի մի տարվան մէջ Գուտտէնբէրդը բոլորովին մոռացվեցաւ կամ թողված էր առանց ուշադրութեան, իսկ Մէտէլինը հոչակվեցաւ Ստրասրուրդի մէջ աստուածային արուեստի հնարող եւ ի պատիւ նորա նշանակվեցան տօներ։

ԺԳ.

Վերադառնուվ Մայնց եւ աղատվելով խորին անարկութենից իւր սիրելի կնոջ հզօր մեռով, Գուտտէնբէրդը բոլորովին յանձնեցաւ իւր զործին։ Նա ընկիրացաւ Ֆառաւութիւնը եւ Շէֆֆէրի հետ, հիմնեց Մայնցի մէջ իւր արուեստանոցը եւ սկսաւ տպել ընկերութեան անունավ Աստուածաշունչը եւ Սաղմոսը, որոնք նշանաւոր էին

իւրեանց տպագրութեան զարմանալի մաքրութեամբ ։ Շէֆֆէրը երկար ժամանակ պարսպումէր պարզագրութեամբ եւ վաճառումէր ճեռագիրներ Փարիզի մէջ։ Նորա ճանապարհորդութիւնը եւ այս քաղաքի նկարիչների ճետ ունեցած յարաքերութիւնները ծանօթացին նորան մետաղներ մշակելու գործնական միջոցների ճետ, որը Մայնց վերադառնալուց յետոյ յարմաքեցրեց տպագրական գործին եւ հնար դառ կապարից շարժական տառեր ծուլելու մեծ հշդութեամբ։ Ահա այս նոր հնարով տառերը շատ մարուր էին դուրս զալիս։ 1437 թուին տպվեցաւ Սադմասը—առաջին զիրքը, որի վերայ նշանակված էր տպագրութեան տարին։ Շուտով հրատաքակեցտ նոյնպէս Գուտտենբէրդի հոկողութեան ներքոյ Մայնցի Աստուածաշունչը Շէֆֆէրի եղանակով ծուլված տառերով, որը տպագրական արուեստի օրինակից դորձ է համարվում։

Ճ.Դ.

Սակայն սեղանաւոր Ֆառւսաը եւ արուեստաւոր Շէֆֆէրը, Գուտտէնբէրդի երկու նոր աշխատակիցները, չկարողացան դէմ զնել փորձութեանը, ինչպէս որ արաւ ստրարուրդիցի Շէտէլինը անդպալի կերպով Գուտտէնբէրդի փառքը խրացնելու, որ ամենազրաւիչ հարստութիւն է, որովհետեւ ամենահաստատ է։ Նորա ուրիշների պէս յոյս դրին խարել զո՞նէ ապադայ սերունդը, և թէ ժամանակակիցներին չէր կարելի։

Այս ուղերձի մէջ, որը տպված է Տիտոս Լիլիոսի զերմանական թարգմանութեան մետ, որի մէջ Շէֆֆէրի հրատարակած այս Թարգմանութիւնը, որ նույրված է Մալկումիիան կայսեր անունին, Շէֆֆէր ինքը խոստովանումէ, որ տպագրութեան արուեստը նարգած է Մայնցի մէջ երևելի մերկնագործ Յովինան Գուտտէնբէրդի ծուլով։ Բայց 7 տարուց յետոյ թէ Շէֆֆէրը եւ թէ Ֆառւսաը մոռացան երեւի իւրեանց խոստովանութիւնը եւ զիւտի բոլոր արժանաւորութիւնը եւ բոլոր պատիւը իւրեանց սեփականացրին։

Շուտով նորանից յետոյ Մալկումիիիան կայսրը տպագրութերին մի կարգում զանց շարադրովմերի հետ, որոնց նա սպասուի արժանի էր համարում եւ նորանով ոչնչացրեց նոցա դէմ եղած նախապաշարումն։

Նոցա արուեստը սկսաւ աղնիւ համարվել, նոյնպէս եւ իւրեանք։ Կայսրը Թոլլատրեց նոցա հաղնել սպասի եւ արծանով կարած հագուստ որի իրաւունքը միայն աղնուականներն ունենին։ Այլու նոցա շնորհեց արծուի նկարով դրօշակ, որ թեւերը տարածած էր երկրագնդի վերայ, որը տպագրական խօսրի ընդհանրապէս տարածվելու եւ բոլոր աշխարհին տիրելու նշան էր։

Ճ.Ե.

Բայց Գուտտէնբէրդը այլ եւս չկար աշխարհի վերայ։ Նորան զիմակիւցաւ մտնել մոռաւորական, կրօնական եւ քաղաքական աւետման աշխարհը, որ նա տեսաւ միայն իւր տեսիլի գագաթից Արքօհասատի վանդում։ Աշխատակիցները յափշշտակեցին նորանից փառքը եւ սեփականութիւնը։ Զ քաւորութիւնը նորից վերշնի անգամ հայածեց նորան իւր հայրենիքից, մահը յափշտակեց նորա որդիները, նորա

միակ մխրթաբութիւն մնաց իւր սիրելի կնոջ դէպի ինքն ունեցած սէրը եւ հաւատարմութիւնը : Շերացած, առանց մի կտոր հացի եւ (կնոջ մահից յետոյ) առանց ընտանիքի, նորան-սկսաւ խնամել վեհանձն Աղօլք իշխանը : Աղօլքը նշանակեց նորան իւր տէրութենական խորհրդական եւ արրունի սենեկապիտ յատկապէս նորա համար որ կարողանայ օգուտ քաղել այն հանճարեղ մարդի ընկերակցութիւնից եւ խօսակցութենից, որը վերջում պիտի խօսակցէր բոլոր տեղերի եւ բոլոր ժամանակների հետ : Կասսառ երկիրը եւ իւր Թագաւորը ապաստանարան տալով Գուտտէնբէրգին յափառեան անմահացրին իւրեանց անունը :

Կասսառի մէջ իւր համեստ կեանքի քանի մի տարիների ընթացքում Գուտտէնբէրգը շարունակումէր իւր մեռով զրբեր տպել : Նա այնտեղ եւ մեռաւ 69 տարեկան հասակում :

«Ես կտակումեմ իմ զրոջը» զրած է նա իւր կտակում, Արքօհաստի վանքում բոլոր իմ ծեռով տպազրած զրբերը : »

Խեղճ Գուտտէնբէրգը ոչինչ կտակելու չունէր իւրեանից յետոյ բացի այն հարսուութենից, ինչ որ ծեռք են բերում նորա նման զիւտեր անողները, այն է Թշուառութիւնների մէջ Թարշամած իւր երիտասարդութեան յիշատակը, անարդարութիւններին եւ հաղածանքին ենթարկված կեանքի յիշատակը, ծանր օրերի, անքուն դիշերների եւ իւր ժամանակակիցների անուշադրութեան յիշատակը:

Ճ. 2.

Այսպէս ապրեց եւ մեռաւ այս մեծ մարդը, բայց իւր դիւտը չմեռաւ իւր հիտ Տպազրութիւնը տարածվեցաւ իսկոյն նորա մահից յետոյ վառօղի ճայթիւնի նման երկու երեք տարուց յետոյ արդէն երրոպական ամեն տէրութիւնների մայրաքաղաքներում մտած էր տպազրութիւնը : Սա մի ժամանակակէտ էր քաղաքակրթութեան վիրածնվելու, որի զարգացումն այնուհետեւ չէ դադարած : Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան, Գերմանիան, Վենետիկը, Գենուան, Հռոմը եւ Պոլոնիան, — շտապեցին օգուտ քաղել այս նոր զիւտից, իւրեանց հոգեւորական եւ աշխարհական զրբերը շատացնելու համար :

Արևելքը ծանօթացաւ այս արուեստին բիւզանդացի Հրէաների ծեռով, որոնք 4500 թ. տպեցին քանի մի ուսումնական բննութիւններ Ռարունական գրականութեան մասին :

Մահմետականները սկսեցին տպազրված զրբեր գործածել միայն Ժ. դարի մօտերը :

Ուսւսիայի մէջ 4500 թ. միտրապօլիտի անօրէնութեամբ Մօսկվայի մէջ տպարան բացվեցաւ այն արուեստաւորների օգնութեամբ, որոնք եկած էին Մազդէրուրդից :

Վերջապէս Հայաստանի տպազրութեան վերաբերմամբ յիշելու է, որ առաջին դիրքը հայերէն Սաղմոս տպվեցաւ 1567 թ. Վենետիկում : Այսուհետեւ Ժ. դարում հիմնվեցան հայկական տպարաններ Միքանում, Փարիզում, Ամստերդամում, Կ. Պոլոսում եւ Լեյպցիգում : 1756 թ. հայ տպարան հիմնվեցաւ Լոնդոնում, 1759 թ. Զմիւռնայում, 1772 թ. Մադրասում, 1774 թ. Սիմէօն Կաթողիկոսը հիմնեց

տպարան Եջմիածնում, առաջին տպված զիրքը Տօնացոյցն էր: 1776 թ. հայ տպարան հիմնվեցաւ Տրիէստում, 1785 թ. Պէտքրուրդում, 1790 թ. Նոր Շախվիշեանում, 1829 թ. Մօսկայում, այլիւ Թիֆլիսում, Ասորախտմում, Շուշում, Բագուռում, Թէոդոսիայում, Բօստովում, Գանձակում, Երեւանում եւն: Այս տպարաններից ամենանշանաւոր օգուտ եւ ծառայութիւն մատոյց հայ գրականութեանը Վենետիկի տպարանը, որ 1788 թ. Վենետիկից տեղափոխվեցաւ ու Դադարի վանրը: Խոկ ներկայումս Վեն: Հայրապետի անդադար հոգացողութեամբ եւ շամքով եւ մեծ Պ. Անասարեանի եւ մեծ Պ. Յօնանեանի օժանդակութեամբ Եջմիածնի բոլորովին նորոգված տպարանը մեծ օգուտ եւ ծառայութիւն կմատուցանէ: հայկական եկեղեցուն եւ ազգին:

Մ. Տ. Ա.

ԳԱՅԼԵՐԻ ՈՐԾ.

ԲԵՆԿԻԿԱՏԻ ՊԱՏՄԱԾԲ.

Պետերբուրգում Ավստրիական գեսապանատան եղած ժամանակս կոմս Պոտոցկին ինձ իւր կալուածը հիւր հրաւիրեց, որը մայրաքաղաքից քսան ժամի ճանապարհ հեռի է—գայլերի որսին մասնակցելու, որը մինչև այս ժամանակ ինձ բոլորովին անցայտ էր:

— Այն հնարք, որը մենք գործ ենք դնում գայլեր որսալու համար, ասաց ինձ կոմսը—ի հարկէ ձեզ բոլորովին անցայտ է, և այնտեղ զբացմունք զարթեցնելու բաներ շատ կտեսնէք, և կյալսամ որ ձեր աշխատութիւնը կվարձատրվի:

— Վարձատրութեան մասին խօսք չկայ, եթէ որ ձեր կալուածը գալով ինձ վայելչութիւն գտնեմ, պատասխանեցի ես—ես համոզված եմ, որ ձեզ պարտաւոր կմնամ իմ կեանքի մի քանի ամենալաւ ժամերս:

— Չմեռնային ամպամած և տիսուր երեկոներից մինն էր, երբ ես կոմս կալուածը հասայ: Նա գտնվումէր մի բարձր տեղ, որտեղից աչքի առաջ բացվումէր ընդարձակ զաշտավայրը, որի վերջին ծայրում հեռու երեւում էր անտառ: Սառցային հաստ կեղել ծածկած էր զետինը, որը գայլերի որսին շատ նպաստումէր, որովհետեւ կոմսի խօսքով ձիերը չեն ընկնի, իսկ փերուն ձիւնը նոցա կարգելէր արագութեամբ զնալու: Մեղանից ամեն մինը երկհրանի հրացան և հինգ հարիւր գնտակ առնելով, մենք—կոմսը՝ նորա մի բարեկամը և ես եռածի սահնակի մէջ նստելով, ուղեւորվեցանք գէպի նշանակված տեղը: Սահնակը թէպէտ և մեծ չէր, այնուամենայնիւ երկը հոգու համար բաւականաչափ տեղ կար: Միջնակ ձին արագութեամբ էր սլանում, իսկ կողքինները թռչոտումէին կատաղութեամբ: այս ձիերին կառավարելու և կառքը ընկնելուց պահպանելու համար հարկաւոր էր